

ՈՐՈՇՈՒՄ

ԵԹԿՊԻ-ի գիտական խորհրդի 2015թ. հունիսի 24-ի

նիստի /արձ.6/

1.2015թ. ընդունելության առաջին փուլի արդյունքների վերաբերյալ Ա. Հարությունյանի զեկույցն ընդունելի գիտություն:

2.2014-2015 ուս. տարվա ավարտական ատեստացիոն հանձնաժողովների նախագահների հաշվետվություններն ընդունելի գիտություն,

2.1 հանձնարարել թողարկող ամբիոնների վարիչներին ԱԱՀ նախագահների հաշվետվությունները քննարկել ամբիոններում, արված դիտողություններն ու առաջարկները հաշվի առնել՝ առաջիկա ուսումնական տարում թերությունները շտկելու և ավարտական քննաշրջանի կազմակերպման աշխատանքները բարելավելու նպատակով:

3. Արձանագրել, որ Խորեոգրաֆիայի ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման նպատակով անցկացված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է սահմանված կարգով և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

3.1 հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը (N1) և փակ, գաղտնի քվեարկության արդյունքները,

3.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա դոցենտ Աննա Ռաշիդի Կարապետյանը ձայների մեծամասնությամբ (24 կողմ, 1 դեմ, 1 անվավեր) ընտրվել է Խորեոգրաֆիայի ամբիոնի վարիչի պաշտոնում,

3.3 առաջարկել ԵԹԿՊԻ-ի ռեկտորին, « ԵԹԿՊԻ-ի ամբիոնների վարիչների ընտրության կարգ»-ի 40-րդ կետի համաձայն, Ա. Կարապետյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ մինչև 5 տարի ժամկետով:

4. Արձանագրել, որ Արվեստի կառավարման և մշակութային քաղաքականության ամբիոնի վարիչի թափուր պաշտոնի տեղակալման նպատակով անցկացված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է սահմանված կարգով և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

4.1 հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը (N2) և փակ, գաղտնի քվեարկության արդյունքները,

4.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա դոցենտ Արթուր Ալեքսանդրի Ղուկասյանը ձայների մեծամասնությամբ (24 կողմ, 1 դեմ, 1 անվավեր) ընտրվել է Արվեստի կառավարման և մշակութային քաղաքականության ամբիոնի վարիչի պաշտոնում,

4.3 առաջարկել ԵԹԿՊԻ-ի ռեկտորին, « ԵԹԿՊԻ-ի ամբիոնների վարիչների ընտրության կարգ»-ի 40-րդ կետի համաձայն, Ա. Ղուկասյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ մինչև 5 տարի ժամկետով:

5. Արձանագրել, որ Հեռակա ֆակուլտետի դեկանի ընտրության նպատակով կազմակերպված փակ, գաղտնի քվեարկությունն ընթացել է սահմանված կարգով և ընթացակարգի խախտումներ չեն գրանցվել,

5.1 1 հաստատել հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը (N3) և փակ, գաղտնի քվեարկության արդյունքները,

5.2 փակ, գաղտնի քվեարկության արդյունքների հիման վրա բանասիրական գիտությունների թեկնածու Արմինե Միխայիլի Եղիազարյանը ձայների մեծամասնությամբ (24 կողմ, 1 դեմ, 1 անվավեր) ընտրվել է Հեռակա ֆակուլտետի դեկանի պաշտոնում 5 տարի ժամկետով,

5.3 առաջարկել ԵԹԿՊԻ-ի ռեկտորին սահմանված կարգով Ա. Եղիազարյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր (ԵԹԿՊԻ-ի դեկանի ընտրության կանոնակարգ՝ կետ 31):

Գիտքարտուղար

Գ. Հովհաննիսյան